**Արձանագրություն N 2-1**
**ՀՀՔԿ-ԵՄԾՁԲ-26/1 ծածկագրով շինարարական աշխատանքների կառավարման համակարգի ծրագրային ապահովման ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան 01.07.2026թ.
ժամը 11:30

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Կ. Անտոնյան |
| Հանձնաժողովի անդամներ ՝ | Մ. Նալբանդյան |
| | Շ. Իսախանյան |
| | Գ. Ծատուրյան |
| | Է. Առուստամյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ն. Հարությունյան |
| Բացակայում էին | Մ. Աղայանց |
| Հանձնաժողովի անդամներ ՝ | Ա. Հյուսիսյան |

**1. ՀՀՔԿ-ԵՄԾՁԲ-26/1 ծածկագրով նախաորակավորման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին**

---

(Կ. Անտոնյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀՔԿ-ԵՄԾՁԲ-26/1 ծածկագրով նախաորակավորման ընթացակարգին մինչև 2026 թվականի հուլիսի 1-ը ժամը 11:30-ը էլեկտրոնային եղանակով հայտ են ներկայացրել <<Լոկատոր>> ՓԲԸ-ն և <<ԷԼԻՔՍ>> ՍՊԸ-ն, իսկ թղթային եղանակով՝ <<ԻՆՍՓԱՅՐԴ>> ՍՊԸ և <<ՍՄԱՐԹ ԱՅԹԻ ՍԼՈՒՇՆՍ>> ՍՊԸ կոնսորցիումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

**2. Գնման ընթացակարգի մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների մասին**

---

(Կ. Անտոնյան)

2.1 Գնման ընթացակարգի մասնակցի՝ <<ԻՆՍՓԱՅՐԴ>> ՍՊԸ և <<ՍՄԱՐԹ ԱՅԹԻ ՍԼՈՒՇՆՍ>> ՍՊԸ կոնսորցիումի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ.

- Կոնսորցիումի մասնակիցների միջև պայմանագիրը կնքվել է **26.26.2026թ.,**
- Կոնսորցիումի կողմից ներկայացվել է մեկ նմանատիպ պայմանագիր՝ պահանջվող հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող 3 տարիների ընթացքում իրականացրած նմանատիպ առնվազն 2 պայմանագրի փոխարեն:

Նմանատիպ է համարվում ստորև նշված ուղղություններից առնվազն մեկով մատուցված և ավարտված պայմանագիրը.

- գործընթացների ավտոմատացման համակարգեր,
- փաստաթղթաշրջանառության կառավարման համակարգեր,
- նախագծերի կառավարման շտ համակարգեր,
- կազմակերպությունների կառավարման տեղեկատվական համակարգեր,
- շինարարական կամ տեղամասային կառավարման համակարգեր,
- ֆինանսական կամ գործընթացային վերահսկման համակարգեր,
- ինտեգրված տեղեկատվական հարթակներ:

2.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել **<<ԻՆՍՓԱՅՐԴ>> ՍՊԸ և <<ՍՄԱՐԹ ԱՅԹԻ ՍԼՈՒՇՆՍ>> ՍՊԸ կոնսորցիումին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 02.07.2026թ. ներառյալ)** շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումները ներկայացնելու դեպքում կոնսորցիումի հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում կգնահատվի անբավարար և կմերժվի:

Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ԵՄԾՁԲ-26/1 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի tender1@minurban.am էլ. փոստին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ -0

## 3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

---------------------------------------------------------------------------------

(Կ. Անտոնյան)

3.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 03.07.2026թ. ժամը 11:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ -0

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------------------- Կ. Անտոնյան

Անդամ՝ ---------------------------------------------- Մ. Նալբանդյան

---------------------------------------------- Շ. Իսախանյան

---------------------------------------------- Գ. Ծատուրյան

---------------------------------------------- Է. Առուստամյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------------------- Ն. Հարությունյան